Դիլիջանի համայնքի ղեկավարին է դիմել քաղ. Հայկ Վարդանի Ղալումյանը՝ Դիլիջան համայնքի, Դիլիջան քաղաքի, Պարզ լճի փողոց թիվ 8/1 հասցեի, իրեն սեփականության իրավունքով պատկանող 892.3քմ հողամասին կից գտնվող /Պարզ լճի փողոց թիվ 8/6 հասցեի/ 392.1քմ մակերեսով հողամասը ընդլայնման կարգով իրեն օտարելու խնդրանքով:
Դիլիջանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված 392.1քմ հողամասը չի համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով առաջադրված հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է Բնակավայրերի հողերի տարածագնահատման տասներորդ գոտում:
Դիլիջանի համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Պարզ լճի փողոց թիվ 8/6 հասցեի 392.1քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, 2679730 /երկու միլիոն վեց հարյուր յոթանասունինը հազար յոթ հարյուր երեսուն/ ՀՀ դրամ արժեքով օտարել քաղ. Հայկ Վարդանի Ղալումյանին:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի, Դիլիջան քաղաքի, Պարզ լճի փողոց թիվ 8/6 հասցեի 392.1քմ հողամասն, ընդլայնման կարգով, ուղղակի վաճառքի ձևով, 2679730 /երկու միլիոն վեց հարյուր յոթանասունինը հազար յոթ հարյուր երեսուն/ ՀՀ դրամ արժեքով քաղ. Հայկ Վարդանի Ղալումյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -1

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ԲԱՁԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԶԱՐԻՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ԹԱԼԱՆՉՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱԻԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՍԱՆԴՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՀԱԿՅԱՆ ՍԱՐԳԻՍ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ. ՍԱՐԳՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (060)700 131, dilijan1@yahoo.com;
dilijan1@dilijan.am, dilijan.tavush@mta.gov.am; Թեժ գիծ՝ (060) 700 133

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հունիսի 2025 թվականի N 948-Ա

## ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՐՋՈՆԻԿԻՁԵԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 10/11 ՀԱՍՑԵԻ 50.0ՔՄ ԵՎ ՕՐՋՈՆԻԿԻՁԵԻ ՓՈՂՈՑ 4-ՐԴ ՆՐԲ. ԹԻՎ 10/9 ՀԱՍՑԵԻ 74.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան համայնքի ղեկավարին է դիմել քաղ. Արտաշես Վալերիի Մովսեսյանը՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Օրջոնիկիձեի փողոց 4-րդ նրբ. թիվ 90/1 հասցեի, իրեն սեփականության իրավունքով պատկանող 640.0քմ հողամասին կից գտնվող Օրջոնիկիձեի փողոց թիվ 10/11 հասցեի 50.0քմ մակերեսով և Օրջոնիկիձեի փողոց 4-րդ նրբ. թիվ 10/9 հասցեի 74.0քմ մակերեսով հողամասերն ընդլայնման կարգով իրեն օտարելու խնդրանքով:
Դիլիջանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված 50.0քմ և 74.0քմ մակերեսներով հողամասերը չեն համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հողամասեր, չեն գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում են Բնակավայրերի հողերի տարածագնահատման տասներորդ գոտում:
Դիլիջանի համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Օրջոնիկիձեի փողոց թիվ 10/11 հասցեի 50.0քմ մակերեսով և Օրջոնիկիձեի փողոց 4-րդ նրբ. թիվ 10/9 հասցեի 74.0քմ մակերեսով հողամասերն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, համապատասխանաբար, 341715 /երեք հարյուր քառասունմեկ հազար յոթ հարյուր տասնհինգ/ դրամ և 505739 /հինգ հարյուր հինգ հազար յոթ հարյուր երեսունինը/ դրամ արժեքներով օտարել քաղ. Արտաշես Վալերիի Մովսեսյանին:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Օրջոնիկիձեի փողոց թիվ 10/11 հասցեի 50.0քմ մակերեսով և Օրջոնիկիձեի փողոց 4-րդ նրբ. թիվ 10/9

հասցեի 74.0քմ մակերեսով հողամասերն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, համապատասխանաբար, 341715 /երեք հարյուր քառասունմեկ հազար յոթ հարյուր տասնհինգ/ դրամ և 505739 /հինգ հարյուր հինգ հազար յոթ հարյուր երեսունինը/ դրամ արժեքներով քաղ. Արտաշես Վալերիի Մովսեսյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ԲԱՁԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԶԱՐԻՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ԹԱԼԱՆՉՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱԻԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՀԱԿՅԱՆ ՍԱՐԳԻՍ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (060)700 131, dilijan1@yahoo.com;
dilijan1@dilijan.am, dilijan.tavush@mta.gov.am; Թեժ գիծ՝ (060) 700 133

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հունիսի 2025 թվականի N 949-Ա

## ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՐՋՈՆԻԿԻՁԵԻ ՓՈՂՈՑ 4-ՐԴ ՆՐԲ. ԹԻՎ 10/12 ՀԱՍՑԵԻ 301.2ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան համայնքի ղեկավարին է դիմել քաղ. Արտաշես Վալերիի Մովսեսյանը՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Օրջոնիկիձեի փողոց 4-րդ նրբ. թիվ 90 հասցեի, իրեն սեփականության իրավունքով պատկանող 600.0քմ հողամասին կից գտնվող Օրջոնիկիձեի փողոց 4-րդ նրբ. թիվ 10/12 հասցեի 301.2քմ մակերեսով հողամասն ընդլայնման կարգով իրեն օտարելու խնդրանքով:
Դիլիջանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված 301.2քմ մակերեսով հողամասը չի համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է Բնակավայրերի հողերի տարածագնահատման տասներորդ գոտում:
Դիլիջանի համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Օրջոնիկիձեի փողոց 4-րդ նրբ. թիվ 10/12 հասցեի 301.2քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, 2058492 /երկու միլիոն հիսունութ հազար չորս հարյուր իննսուներկու/ դրամ արժեքով օտարել քաղ. Արտաշես Վալերիի Մովսեսյանին:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Օրջոնիկիձեի փողոց 4-րդ նրբ. թիվ 10/12 հասցեի 301.2քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, 2058492 /երկու միլիոն հիսունութ հազար չորս հարյուր իննսուներկու/ դրամ արժեքով քաղ. Արտաշես Վալերիի Մովսեսյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

| Կողմ -11 | Դեմ -0 | Ձեռնպահ -2 |
|---|---|---|
| ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ | | ՄԱԻԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ |
| ԲԱՋԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ | | ՍԱՀԱԿՅԱՆ ՍԱՐԳԻՍ |
| ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ | | |
| ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ | | |
| ՂԱՄԲԱՐՅԱՆ ԶԱՐԻՆԵ | | |
| ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ | | |
| ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ | | |
| ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ | | |
| ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ | | |
| ԹԱԼԱՆՉՅԱՆ ԱՐՄԵՆ | | |
| ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ. ՍԱՐԳՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (060)700 131, dilijan1@yahoo.com; dilijan1@dilijan.am, dilijan.tavush@mta.gov.am; Թեժ գիծ՝ (060) 700 133

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հունիսի 2025 թվականի N 950-Ա

## ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՐՋՈՆԻԿԻՁԵԻ ՓՈՂՈՑ 4-ՐԴ ՆՐԲ. ԹԻՎ 10/10 ՀԱՍՑԵԻ 46.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան համայնքի ղեկավարին է դիմել քաղ. Արտաշես Վալերիի Մովսեսյանը՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Օրջոնիկիձեի փողոց 4-րդ նրբ. թիվ 10/7 հասցեի, իրեն սեփականության իրավունքով պատկանող 2221.4քմ հողամասին կից գտնվող Օրջոնիկիձեի փողոց 4-րդ նրբ. թիվ 10/10 հասցեի 46.0քմ մակերեսով հողամասն ընդլայնման կարգով իրեն օտարելու խնդրանքով:
Դիլիջանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված 46.0քմ մակերեսով հողամասը չի համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է Բնակավայրերի հողերի տարածագնահատման տասներորդ գոտում:
Դիլիջանի համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Օրջոնիկիձեի փողոց 4-րդ նրբ. թիվ 10/10 հասցեի 46.0քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, 314378 /երեք հարյուր տասնչորս հազար երեք հարյուր յոթանասունութ/ դրամ արժեքով օտարել քաղ. Արտաշես Վալերիի Մովսեսյանին:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Օրջոնիկիձեի փողոց 4-րդ նրբ. թիվ 10/10 հասցեի 46.0քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, 314378 /երեք հարյուր տասնչորս հազար երեք հարյուր յոթանասունութ/ դրամ արժեքով քաղ. Արտաշես Վալերիի Մովսեսյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ -12 Դեմ -0 Ձեռնպահ -1

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ԲԱԶԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԶԱՐԻՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ԹԱԼԱՆՉՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱԻԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՀԱԿՅԱՆ ՍԱՐԳԻՍ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ. ՍԱՐԳՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (060)700 131, dilijan1@yahoo.com;
dilijan1@dilijan.am, dilijan.tavush@mta.gov.am; Թեժ գիծ՝ (060) 700 133

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հունիսի 2025 թվականի N 951-Ա

## ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ 4508.3ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 7 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ 980.9ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 2 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարը համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացրել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Բնակավայրերի հողերից 4508.3քմ մակերեսով թվով 7 հողամասերը, Գյուղատնտեսական նշանակության հողերից 980.9քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը մրցույթի միջոցով վարձակալության իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված մրցութային լոտերով, մակերեսներով, պայմաններով և տարեկան վճարի մեկնարկային գներով:
Հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Բնակավայրերի հողերից 4508.3քմ մակերեսով թվով 7 հողամասերը, Գյուղատնտեսական նշանակության հողերից 980.9քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը մրցույթի միջոցով վարձակալության իրավունքով տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը և հաստատել մեկնարկային գինը՝ համաձայն կից աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -2

| | |
|---|---|
| ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ | ՄԱԻԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ |
| ԲԱՋԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ | ՍԱՀԱԿՅԱՆ ՍԱՐԳԻՍ |
| ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ | |
| ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ | |
| ՂԱՄԲԱՐՅԱՆ ՁԱՐԻՆԵ | |
| ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ | |
| ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ | |
| ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ | |
| ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ | |
| ԹԱԼԱՆՉՅԱՆ ԱՐՄԵՆ | |
| ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ. ՍԱՐԳՍՅԱՆ**

Հավելված
Դիլիջանի համայնքի ավագանու
2025թ. հունիսի 25-ի թիվ 951-Ա որոշման

Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերի վարձակալության իրավունքի մրցույթ

| Հ/հ | Լոտ | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Օգտագործման նպատակը | Հողամասի տրամադրման ժամկետը | Վարձակալության իրավունքի տարեկան վճարի մեկնարկային գինը /ՀՀ դրամ/ | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Լոտ 1/Վ-25/ | ք. Դիլիջան, Արցախի փ. 1-ին նրբ. 5/5 | 11-003-0087-0199 | 130,4 | Բնակավայրերի հող | այլ հողեր | ավտոկայանատեղի | 25 տարի | 26 080 | առանց կառուցապատման իրավունքի |
| 2 | Լոտ 2/Վ-25/ | ք. Դիլիջան, Արցախի փ. 1-ին նրբ. 3/2 | 11-003-0087-0198 | 145,5 | Բնակավայրերի հող | այլ հողեր | ավտոկայանատեղի | 25 տարի | 29 100 | առանց կառուցապատման իրավունքի |
| 3 | Լոտ 3/Վ-25/ | ք. Դիլիջան, Սայաթ-Նովայի փ. 71/9 | 11-003-0048-0043 | 271,0 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | բանջարաբուծություն | 25 տարի | 54 200 | առանց կառ. իրավունքի. գծային ենթ. օտարման և իրավաբանական անձանց սանիտարապաշտպանական գոտիներում գտնվող հողամաս |
| 4 | Լոտ 4/Վ-25/ | ք. Դիլիջան, Թբիլիսյան խճ. 69/8 | 11-003-0713-0017 | 671,5 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | բանջարաբուծություն | 25 տարի | 94 010 | առանց կառ. իրավունքի. գծային ենթ. օտարման և իրավաբանական անձանց սանիտարապաշտպանական գոտիներում գտնվող հողամաս |
| 5 | Լոտ 5/Վ-25/ | ք. Դիլիջան, Կամոյի փ. 149/3 | 11-003-0344-0031 | 714,0 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | բանջարաբուծություն | 25 տարի | 99 960 | առանց կառ. իրավունքի. գծային ենթ. օտարման և իրավաբանական անձանց սանիտարապաշտպանական գոտիներում գտնվող հողամաս |
| 6 | Լոտ 6/Վ-25/ | ք. Դիլիջան, Կամոյի փ. 149/4 | 11-003-0344-0030 | 889,2 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | բանջարաբուծություն | 25 տարի | 124 488 | առանց կառ. իրավունքի. գծային ենթ. օտարման և իրավաբանական անձանց սանիտարապաշտպանական գոտիներում գտնվող հողամաս |
| 7 | Լոտ 7/Վ-25/ | գ. Հովք, 7-րդ փ. 14/1 | 11-044-0201-0042 | 1 686,7 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | բանջարաբուծություն | 25 տարի | 50 601 | առանց կառուցապատման իրավունքի |
| 8 | Լոտ 8/Վ-25/ | ք. Դիլիջան | 11-003-0660-0005 | 280,9 | Գյուղատնտեսական նշանակության | արոտավայր | արոտավայր | 25 տարի | 28 090 | առանց կառուցապատման իրավունքի |
| 9 | Լոտ 9/Վ-25/ | ք. Դիլիջան | 11-003-0654-0055 | 700,0 | Գյուղատնտեսական նշանակության | արոտավայր | արոտավայր | 25 տարի | 35 000 | առանց կառուցապատման իրավունքի |

***Դիլիջանի համայնքի ղեկավար*** ***Դ.Սարգսյան***

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (060)700 131, dilijan1@yahoo.com;
dilijan1@dilijan.am, dilijan.tavush@mta.gov.am; Թեժ գիծ՝ (060) 700 133

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հունիսի 2025 թվականի N 952-Ա

## ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԱՄՈՅԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 109/3 ՀԱՍՑԵԻ ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԶԲԱՂԵՑՐԱԾ 33.2ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2025թ. հունիսի 02-ի թիվ 435-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կամոյի փողոց, թիվ 109/3 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում քաղ. Վոլոդյա Վիկտորի Հովհաննիսյանի կողմից ինքնակամ կառուցված 41.82քմ արտաքին մակերեսով առևտրի սրահի նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 23062025-11-0019/: Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Վոլոդյա Հովհաննիսյանին՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կամոյի փողոց, թիվ 109/3 հասցեի առևտրի սրահը՝ 41.82քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 33.2քմ հողամասը, համապատասխանաբար, 871697 դրամ և 226899 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարը նշված առևտրի սրահը և վերջինիս զբաղեցրած 33.2քմ հողամասը քաղ. Վոլոդյա Վիկտորի Հովհաննիսյանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կամոյի փողոց, թիվ 109/3 հասցեի առևտրի սրահը՝ 41.82քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 33.2քմ հողամասը, համապատասխանաբար, 871697 դրամ և 226899 դրամ արժեքներով քաղ. Վոլոդյա Վիկտորի Հովհաննիսյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ԲԱԶԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԶԱՐԻՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ԹԱԼԱՆՉՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱԻԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՀԱԿՅԱՆ ՍԱՐԳԻՍ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ. ՍԱՐԳՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
# ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (060)700 131, dilijan1@yahoo.com;
dilijan1@dilijan.am, dilijan.tavush@mta.gov.am; Թեժ գիծ՝ (060) 700 133

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հունիսի 2025 թվականի N 953-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ և 42-րդ կետերի պահանջներով և նկատի ունենալով, որ համայնքային ֆինանսական ներդրումներ կատարելու պայմանով 2025 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին հատկացվելու են նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ, Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն Դիլիջան համայնքի ղեկավարի առաջարկությանը և թույլատրել 2025 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից Դիլիջան համայնքին հատկացվող նպատակային հատկացումներից՝ սուբվենցիաներից ուղղորդել «Դիլիջան համայնքի Գոշ բնակավայրի խմելու ջրագծերի հիմնանորոգում և ջրաչափերի տեղադրում» տնտեսական զարգացման ծրագրին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ԲԱՋԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԶԱՐԻՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ԹԱԼԱՆՋՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱԻԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՀԱԿՅԱՆ ՍԱՐԳԻՍ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ. ՍԱՐԳՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (060)700 131, dilijan1@yahoo.com;
dilijan1@dilijan.am, dilijan.tavush@mta.gov.am; Թեժ գիծ՝ (060) 700 133

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հունիսի 2025 թվականի N 954-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33 -րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով, Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1. «06-03-01» Դիլիջան համայնք /Ջրամատակարարում/ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման նախահաշվի 5112 /շենքերի և շինությունների կառուցում/ տնտեսագիտական հոդվածից նվազեցնել՝ 1 000 000 ՀՀ դրամ և ուղղել «08-01-01» Դիլիջան համայնք /Սպորտային գոտիների և մարզական կենտրոնների կառուցում/ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման նախահաշվի 5134 /նախագծահետազոտական ծախսեր/ տնտեսագիտական հոդվածին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ԲԱՂԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԶԱՐԻՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ԹԱԼԱՆՁՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱԻԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՀԱԿՅԱՆ ՍԱՐԳԻՍ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ. ՍԱՐԳՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
# ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (060)700 131, dilijan1@yahoo.com;
dilijan1@dilijan.am, dilijan.tavush@mta.gov.am; Թեժ գիծ՝ (060) 700 133

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հունիսի 2025 թվականի N 955-Ա

## ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի՝ Սմբատ Անդրանիկի Առաքելյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող փոխադրամիջոցների գույքահարկի պարտավորությունների մասով արտոնություն սահմանելու խնդրանքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Հարկային օրենսգրքի» 245-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով ՝ Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1.Քաղաքացի՝ Սմբատ Անդրանիկի Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող փոխադրամիջոցների գույքահարկի պարտավորությունների նկատմամբ սահմանել արտոնություն՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ԲԱՂԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԶԱՐԻՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ԹԱԼԱՆՉՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱԻԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՀԱԿՅԱՆ ՍԱՐԳԻՍ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ. ՍԱՐԳՍՅԱՆ**

**Հավելված**
Դիլիջան համայնքի ավագանու
2025 թվականի հունիսի 25-ի N 955 - Ա որոշման

# ՑԱՆԿ
## ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂՆԵՐԻ

| Հ/Հ | Արտոնություն ստացող բնակչի անունը, ազգանունը | Հարկի տեսակը | Ապառքը (ՀՀ դրամ) | Տույժերը (ՀՀ դրամ) | Ընդամենը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Սմբատ Առաքելյան | Փոխադրամիջոցի գույքահարկ | 115 600 | 3 232 | 118 832 | Ապառք՝ առ 31.12.2025թ. Տույժեր՝ առ 25.06.2025թ. |
| | Ընդամենը | | 115 600 | 3 232 | 118 832 | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
# ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (060)700 131, dilijan1@yahoo.com;
dilijan1@dilijan.am, dilijan.tavush@mta.gov.am; Թեժ գիծ՝ (060) 700 133

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հունիսի 2025 թվականի N 956-Ա

## ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ 3586.7ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 3 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացվել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Բնակավայրերի հողերից 3586.7քմ մակերեսով թվով 3 հողամասերը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված մրցութային լոտով, պայմաններով և տարեկան վճարի մեկնարկային գնով:
Հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Բնակավայրերի հողերից 3586.7քմ մակերեսով թվով 3 հողամասերը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը և հաստատել մեկնարկային գները՝ համաձայն կից աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -2

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԻՒԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՍԱՀԱԿՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ԲԱՋԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԶԱՐԻՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ԹԱԼԱՆՉՅԱՆ ԱՐՄԵՆ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ. ՍԱՐԳՍՅԱՆ**

Աղյուսակ.
Դիլիջանի համայնքի ավագանու
2025թ. հունիսի 25-ի թիվ 956-Ա որոշման

Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող հողերի կառուցապատման իրավունքի մրցույթ

| Հ/հ | Լոտ | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Օգտագործման նպատակը | Հողամասի տրամադրման ժամկետը | Կառուցապատման իրավունքի տարեկան վճարի մեկնարկային գին /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Լոտ 1 /ԶԿ-25/ | ք. Դիլիջան, Ա. Մյասնիկյան փ. 17/4 | 11-003-0313-0085 | 300,0 | Բնակավայրերի հող | հասարակական կառուցապատման | ոչ հիմնական շինությունների կառուցման | մինչև 2060թ. դեկտեմբերի 31-ը | 45 000 |
| 2 | Լոտ 2 /ԶԿ-25/ | ք. Դիլիջան, Պարզ լճի փ. 19/3 | 11-003-0675-0105 | 952,2 | Բնակավայրերի հող | բնակելի կառուցապատման | ոչ հիմնական շինությունների կառուցման | մինչև 2060թ. դեկտեմբերի 31-ը | 133 308 |
| 3 | Լոտ 3 /ԶԿ-25/ | ք. Դիլիջան, Սարալանջի փ. 7-րդ նրբ. 5 | 11-003-0053-0605 | 2334,5 | Բնակավայրերի հող | այլ հողեր | ոչ հիմնական շինությունների կառուցման | մինչև 2060թ. դեկտեմբերի 31-ը | 233 450 |

***Դիլիջանի համայնքի ղեկավար*** ***Դ.Սարգսյան***

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (060)700 131, dilijan1@yahoo.com;
dilijan1@dilijan.am, dilijan.tavush@mta.gov.am; Թեժ գիծ՝ (060) 700 133

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հունիսի 2025 թվականի N 957-Ա

### ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ 66 ՀԱՍՑԵԻ ԹԻՎ 11 ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿԸ՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ 18.9 ՔԱՌ. ՄԵՏՐ ՏԱՐԱԾՔՈՎ, 3 ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ (ՓՈԽԱՏՎՈՒԹՅԱՆ) ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով ՀՀ Արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայության գլխավոր քարտուղարի դիմումը, համայնքի ղեկավարը առաջարկություն է ներկայացրել ք. Դիլիջան, Մյասնիկյան 66 հասցեի վարչական շենքի 4-րդ հարկի թիվ 11 աշխատասենյակը՝ ընդհանուր 18.9 քառ. մետր տարածքով ՀՀ Արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը 3 տարի ժամկետով, անհատույց օգտագործման (փոխատվության) հանձնելու մասին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող ք. Դիլիջան, Մյասնիկյան 66 հասցեի վարչական շենքի 4-րդ հարկի թիվ 11 աշխատասենյակը՝ ընդհանուր 18.9 քառ. մետր տարածքով, 3 տարի ժամկետով, անհատույց օգտագործման (փոխատվության) հանձնել ՀՀ Արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ԲԱՋԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԶԱՐԻՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ԹԱԼԱՆՉՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱԻԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՀԱԿՅԱՆ ՍԱՐԳԻՍ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ. ՍԱՐԳՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
# ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (060)700 131, dilijan1@yahoo.com;
dilijan1@dilijan.am, dilijan.tavush@mta.gov.am; Թեժ գիծ՝ (060) 700 133

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հունիսի 2025 թվականի N 958-Ա

## ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին որոշում է.

Դիլիջան համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օր սահմանել 2025 թվականի սեպտեմբերի 10-ին, ժամը 17-00-ին:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ԲԱՂԻՆՅԱՆ ԱՐՄԱՆ

ԱԼԻԽԱՆՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ԽԵՄՉՅԱՆ ԱՐՇԱԿ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԶԱՐԻՆԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԳՈՒԼԻՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ

ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ

ԹԱԼԱՆՉՅԱՆ ԱՐՄԵՆ

ՄԱԻԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ՍԱՆԹՐՈՍՅԱՆ ՆՈՒՆԵ

ՍԱՀԱԿՅԱՆ ՍԱՐԳԻՍ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ. ՍԱՐԳՍՅԱՆ**